ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ N ՄՇԴ-285-2023 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան « 25 » « 12 » 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Մ. Բաղալյանի, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականություն» դրամաշնորհի հատկացման մրցույթի մասնագիտական խմբի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի նիստի N 6 արձանագրությունը և 2023 թվականի հունիսի 26-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-285-2023 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 9.3 կետը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Պայմանագրի 5.2 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«5.2. ԱԱՀ-ի գծով հաշվարկված լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:»:

1.2. Պայմանագրի 7.1 կետում «2023 թվականի դեկտեմբերի 15-ն» և «2023 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել համապատասխանաբար «2024 թվականի փետրվարի 1-ն» և «2024 թվականի փետրվարի 25-ը» բառերով:

1.3. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ի 3.3 կետում «դեկտեմբերի 15-ը» բառերը փոխարինել «2024 թվականի փետրվարի 1-ը» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039717
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 38
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Արցախ մ/ճ
Հ/Հ 1150012570010100
ՀՎՀՀ 00415967
Հեռ. 093 200 551
Տնօրեն

_____ Մ. Բաղալյան
(ստորագրություն)
Կ. Տ.